

## Սամվել Պողոսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ.

*Բանալի բառեր*- Արևմտյան Հայաստանի ինքնավարություն, Սան Ստեֆանոյի պայմանագիր, 1876-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմ, Ներսես Վարժապետյան:

Հայ պատմագիտության մեջ բավական քիչ է ուշադրություն դարձվել Հայկական հարցի սկզբնավորման շրջանում հայ գործիչների կողմից առաջ քաշված ինքնավարության ծրագրերին, ձգտումներին, դրանց իրականացման հնարավորություններին, այն սխալներին, որոնք հանգեցրին ձախողման: Հիմնական անդրադարձը կատարվել է Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերին, դրանց համեմատական վերլուծությանը: Փաստորեն, շուրջ 140 տարիների ընթացքում հարյուրավոր աշխատություններում անդրադարձ է կատարվել այդ ժամանակաշրջանին, ուսումնասիրվող հիմնահարցի մի շարք կողմերին, սակայն դրանք վերաբերում են միայն Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրին, Ս. Խրիմյանի Եվրոպա մեկնելուն, իսկ հայկական ձգտումների մասին գրեթե որևէ խոսք չկա: Թեմայի շուրջ համեմատաբար ընդարձակ և խոր ուսումնասիրություններից են Սարուխանի<sup>1</sup>, Խորեն Գաբրիլյանի<sup>2</sup>, Ռաֆիկ Հովհաննիսյանի<sup>3</sup> աշխատությունները:

Ուսումնասիրության մեջ լուսաբանվել են Սան Ստեֆանոյի պայմանագրի նախօրեին առաջ քաշված հայկական ձգտումները, ինքնավարության նախագծերը:

1875-1876 թթ. թուրքական բռնապետության դեմ ապստամբություններ բռնկվեցին Բոսնիա-Հերցեգովինայում և Բուլղարիայում: Շուտով հակաթուրքական դաշինք կնքեցին Սերբիան ու Չեռնոգորիան: Բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները կրկին միջազգային դիվանագիտության սեղանին դրեցին Արևելյան հարցը: Մեծ տերությունների ակտիվ քննարկման առարկա դարձավ քայքայման ու փլուզման եզրին հայտնված Օսմանյան կայսրության ճակատագիրը:

1876 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռուսական դեսպան Նիկոլայ Իգնատևը կարողացավ Կ. Պոլսի մյուս դեսպաններին համոզել ընդունելու Ռուսաստանի վարչապետ Ալեքսանդր Գորչակովի առաջ քաշած ծրագիրը, որը նախատեսում էր միավորել Բոսնիան և Հերցոգովինան, Բուլղարիան բաժանել Արևելյան և Արևմտյան մասերի՝ Տիրնովո և Սոֆիա կենտրոններով, ստեղծել տեղական վարչություն, երաշխավորել դավանանքի ազատություն, քրիստոնյաների ու մահմեդականների իրավունքների հավասարություն<sup>4</sup>:

1876 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1877 թ. հունվարի 8-ը Կ. Պոլսում հրավիրվեց մեծ տերությունների դեսպանների կոնֆերանս, որը քննարկեց Բալկաններում ստեղծված ճգնաժամը հաղթահարելու հարցը: Սակայն այն ձախողելու նպատակով դեսպանաժողովի բացման օրը սուլթան Աբդուլ Համիդ II-ը երկրում սահմանադրություն հռչակեց: Ի վերջո, համոզվելով, որ թուրքերը մտադիր չեն ընդունելու դեսպանաժողովի մշակված առաջարկները, տերությունների դեսպանները դիմեցին բողոքի կտրուկ միջոցի՝ հեռացան Կ. Պոլսից<sup>5</sup>:

Դեսպանաժողովից մեկ օր առաջ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը որոշում էր ընդունել պահանջելու, որպեսզի արևմտահայության համար նույնպես բարենորոգումներ ապահովվեն. «Ազգային ժողովս վստահ ըլլալով թէ Օսմանեան կառավարութիւնն ինչ առանձնաշնորհութիւններ որ պիտի տայ ուրիշ ազգաց, նոյնը պիտի շնորհէ նաև

<sup>1</sup> Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը թիրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912:

<sup>2</sup> Գաբրիլյան Խ., Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէյրուք, 1962:

<sup>3</sup> Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965:

<sup>4</sup> Винаградов В., Балканская эпопея князя А. М. Горчакова, Москва, 2005, ст. 214.

<sup>5</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 157:

Հայոց ազգին՝ անոր արդի վիճակին բարւոքմանը համար, և այս կերպով որ և է զրկանք տեղի չպիտի ունենան, որ բողոքոյ առիթ ընծայեն Հայոց ազգին»<sup>6</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայ ազգային գործիչները որոշեցին օգտվել միջազգային նպաստավոր իրավիճակից և բարձրացնել Արևմտյան Հայաստանի վիճակը բարելավելու խնդիրը: Դա պայմանավորված էր արևմտահայության համար ստեղծված չափազանց ծանր դրությամբ, քանզի Արևմտյան Հայաստանում տիրող անպատժելիությունը վերացնելուն ուղղված պատրիարքարանի նախկինում կատարած բոլոր ջանքերը ամբողջությամբ անուշադրության էին մատնվել թուրքական իշխանությունների կողմից: 1872 թ. և 1876 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և Ազգային ժողովը սուլթանական կառավարությանը ներկայացրին Արևմտյան Հայաստանում կատարվող կեղեքումների մասին բողոք-տեղեկագրեր, սակայն իշխանությունները դրանց ուշադրություն չդարձրեցին<sup>7</sup>: Բնականաբար, բալկանյան ժողովուրդների ապստամբությունները և նրանց վիճակի բարելավմանն ուղղված մեծ տերությունների միջամտությունը ոգևորեց նաև հայերին:

1876 թ. դեկտեմբերի 6-ին Կ. Պոլսի պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանը հանդիպեց բրիտանական դեսպան Հենրի Էլիոտի հետ: Նա հույս հայտնեց, որ «դեսպանախորհուրդը պիտի չլինի Բ. Դրան առաջ, թե ապստամբուած նահանգներին տրուեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան միւս նահանգներն, որոնք հանդարտ են կացել, բայց իրաւունք ունեն, որ իրանց վիճակն ևս նկատողութեան առնուի»<sup>8</sup>: Միևնույն ժամանակ պատրիարքը զգուշացրեց, որ «իր ժողովուրդը շատ գրգռուած է եւ եթէ եւրօպական պետութիւնների համակրութիւնը գրաւելու համար հարկաւոր էր ապստամբուել, ամենեւին դժուար չէր այդպիսի մի շարժում առաջ բերել»<sup>9</sup>:

Ներսես պատրիարքի մասին Հակոբ Սառիկյանը գրում է. «Իր ստանձնած պարտականություններն աշխատում էր կատարել բավական զգուշությամբ, տակտով, տեղը եկած ժամանակ էլ անվերապահ համարձակությամբ»<sup>10</sup>:

Չնայած պատրիարքի մարտական հայտարարություններին՝ իրականում արևմտահայությունը դեռևս պատրաստ չէր զենք վերցնելու և արյուն թափելու սեփական ազատագրության համար: Մեծամասնությունը հույս ուներ ինքնավարություն կամ վիճակի բարելավում ստանալ՝ ի վարձատրություն օսմանյան պետության նկատմամբ ունեցած հավատարմության: Դրան տեղյակ էին բրիտանական դիվանագետները և սուլթանական պաշտոնյաները, որոնք, դրանից ելնելով, փորձում էին հայկական պահանջներն օգտագործել միայն Բալկանյան հարցը ձախողելու համար:

Դեկտեմբերի 10-ին Հայոց ազգային ժողովը քննարկեց ստեղծված միջազգային նպաստավոր վիճակից օգտվելու հարցը: Հայ գործիչներն անարդար էին համարում, որ մեծ տերությունները բարձրացնում էին միայն բալկանյան քրիստոնյաների վիճակը բարելավելու խնդիրը, մինչդեռ հայերի մասին չէին խոսում, չնայած «այս ժողովուրդը հինգ դարեր է ի վեր մեծ էն մինչև փոքրը ամենայն հաւատարմութեամբ հպատակած է տէրութեան և երբէք ցաւ մը պատճառած չէ անոր ոչ գանձը վատնելով և ոչ արին թափել տալով. հասած է ժամն՝ որ մեր այս անզուգական հաւատարմութեան վարձատրութիւնը խնդրենք տէրութենէն, և մեր առ Օսմանեան գահն ունեցած երախտագիտական զգացումնիս հանդիսապէս յայտարարենք»<sup>11</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայ գործիչներն անհիմն հույսեր էին փայփայում, որ թուրքական կառավարությունը կգնահատի հայ ժողովրդի դարավոր հավատարմությունը և կբարելավի արևմտահայության վիճակը:

<sup>6</sup> «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1876-1877, Կ. Պոլիս, էջ 329:

<sup>7</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 258:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>10</sup> Սառիկյան Հ., Հիշողություններ, 1878-1924, Ե., 2015, էջ 116:

<sup>11</sup> «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1876-1877, էջ 325:

Արևմտահայության հարցը դեսպանաժողովում բարձրացնելու առաջարկով հանդես եկան նաև արևելահայ գործիչները: 1876 թ. դեկտեմբերին «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ 9 անձից կազմված մի պատվիրակություն թիֆլիսի քաղաքապետ, վրացի քաղաքական գործիչ, իշխան Դիմիտրի Կիպիանու գլխավորությամբ Կովկասի փոխարքային փոխանցեց թիֆլիսի հայ բնակչության ուղերձը՝ խնդրելով միջնորդել ցարի առաջ թուրքիայի մյուս քրիստոնյաների հետ հավասար պաշտպանելու նաև արևմտահայության դատը<sup>12</sup>:

Դեկտեմբերի 16-ին Լոնդոնում հասարակական գործիչ Կարապետ Հակոբյանի նախաձեռնությամբ կազմավորվեց լոնդոնահայերի հանձնաժողով՝ արևմտահայության ապագայի հարցը քննարկելու համար: Այդ մարմնի նախագահ ընտրվեց հնդկահայ մեծահարուստ Սեթ Աբգարը: Նրանք ուղերձով դիմեցին Արևելյան հարցով զբաղվող բրիտանական հանձնաժողովի նախագահ Մանդելային՝ առաջարկելով հայերին ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի սահմաններում: Փաստաբան Ջեյմս Բրայսը (հետագայում դերկոմս և լորդերի պալատի անդամ) միանգամայն օրինական համարեց այդ պահանջը<sup>13</sup>:

Ներսես պատրիարքը համագործակցություն հաստատեց նաև հույն գործիչների հետ, որպեսզի Օսմանյան կայսրության այդ երկու խոշորագույն քրիստոնյա համայնքների շահերը հաշվի առնվեն դեսպանաժողովում: Սակայն մեծ տերություններին հետաքրքրում էին միայն Բոսնիա-Հերցեգովինայի և Բուլղարիայի խնդիրները: Այդպիսով՝ հայ-հունական դիմումներն անուշադրության մատնվեցին: Հետաքրքիր է նշել, որ 1877 թ. հունվարին բրիտանացի ռազմական փորձագետ Ռ. Հոմը դա մեծ սխալ համարեց: Նա համոզված էր, որ լորդ Ռոբերտ Սոլսբերին լուրջ թյուրիմացության մեջ է, քանի որ խաղի մասնակից կողմեր է համարում բրիտանացիներին, ռուսներին ու թուրքերին: «Սակայն այժմ ամենից հզոր խմբակցությունը հույներն են, նրանցից հետո՝ հայերը: Հույները լորդ Salisbury-ի կողմից կոնֆերանսում էլ բացեիբաց անտեսվեցին, դրա համար էլ նրանք կոնֆերանսին հակադրվեցին ատամներով ու եղունգներով...»<sup>14</sup>:

Հայ գործիչները սին հույսեր էին կապում մեծ տերությունների ու սուլթանական կառավարության բարի կամքի հետ: Մոռանում էին, որ բալկանյան քրիստոնյաների վիճակը քննարկման առարկա էր դարձել, քանի որ նրանք զենքի էին դիմել և ունեին Ռուսաստանի աջակցությունը:

Բալկանյան քրիստոնյաների պաշտպանությամբ ամենագործուն ձևով միջամտեց Ռուսաստանը, որի հանդես գալը պատմաքաղաքական այդ կարևոր պահին՝ վճռորոշ նշանակություն ունեցավ հետագա զարգացումների վրա: Նրա նախաձեռնությամբ 1877 թ. մարտի 19-ին Լոնդոնում տերությունների ներկայացուցիչները հերթական անգամ քննարկեցին Արևելյան հարցը և սուլթանական կառավարությանը ներկայացրին արձանագրություն, որը նախատեսում էր բարելավել բալկանյան ժողովուրդների վիճակը<sup>15</sup>: Թուրքական իշխանությունների համար ստեղծվեց բավական ծանր վիճակ, քանի որ հայտնվեցին միջազգային լուրջ ճնշման տակ, որը նրանց պարտադրում էր ավելի չգրգռել և հնարավորինս սիրաշահել հպատակ ազգերին:

Մարտի 22-ին մեծ վեճիրը պոլսահայ ազդեցիկ գործիչներից Գրիգոր Օտյանի միջոցով Ներսես պատրիարքին տեղեկացրեց, որ իբր բոլոր կուսակալություններին հրաման է ուղարկել, որպեսզի պատժեն մինչ այդ անպատիժ մնացած հանցագործներին, փոխեն ժողովրդին կեղեքող և անարդարություններ կատարող պաշտոնյաներին, ինչպես նաև վանքերի սեփականության մասին նոր օրենք են պատրաստում: Միաժամանակ կառավարության նիստում, որին ներկա էր նաև Գ. Օտյանը, բազմաթիվ նախարարներ գովեստներ հնչեցրին Հայոց պատրիարքի հասցեին, որ համարձակուրե-

<sup>12</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 91:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 63, թ. 7-8:

<sup>14</sup> Խափոտիս Ի., Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996), թարգմ.՝ Հ. Բարթիկյան, Ե., 2012, էջ 9:

<sup>15</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 183:

յուն էր ունեցել ներկայացնելու երկրում տիրող ծանր վիճակը՝ դրանով մեծ ծառայություն մատուցելով պետությանը<sup>16</sup>:

Սակայն թուրքերը, ստանալով Մեծ Բրիտանիայի գաղտնի աջակցությունը, ի վերջո մերժեցին Բալկաններում բարենորոգումներ իրականացնելու մեծ տերությունների վերջնագիրը: Դա առիթ դարձնելով՝ 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

Ռուսաստանի միջամտությունն, անշուշտ, առավելապես պայմանավորված էր ոչ թե հավատակից ժողովուրդներին փրկելու մարդասիրական մղումներով, այլ սեփական ռազմաքաղաքական հեռահար ծրագրերով: Հայտնի է, որ 1853-1856 թթ. տեղի ունեցած Արևելյան կամ Դրիմի պատերազմի ժամանակ Ռուսաստանը պարտություն էր կրել Օսմանյան կայսրության և նրան միացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Սարդինիայի միացյալ ուժերից: 1856 թ. Փարիզի նվաստացուցիչ պայմանագրով Ռուսաստանի դիրքերը Սև ծովի ավազանում, Բալկաններում ու Մերձավոր Արևելքում թուլացել էին: Այժմ միջազգային նպաստավոր պայմաններ էին ստեղծվել վերականգնելու Ռուսական կայսրության դիրքերը տարածաշրջանում և վերահաստատելու գերտերության կարգավիճակը: Ցարական կառավարության ամենագլխավոր նպատակներից էր Կ. Պոլսի և սևծովյան նեղուցների գրավումը, որի շնորհիվ ռուսական նավատորմի համար Սև ծովից ազատ մուտք կբացվեր դեպի Միջերկրական ծով:

Իրավիճակը նպաստավոր էր այն պատճառով, որ մյուս տերությունները չէին կարող բացահայտորեն հանդես գալ Ռուսաստանի քայլերի դեմ, քանի որ նա պատերազմը սկսել էր քրիստոնյաների շահերը պաշտպանելու կարգախոսով, իսկ սուլթանը մերժել էր տերությունների ներկայացրած վերջնագիրը:

Ռազմական գործողությունները ծավալվեցին Բալկաններում, Կովկասում և Սև ծովում: Ռուսաստանը լավ էր պատրաստվել պատերազմին, նրա բանակը թվաքանակով և զինվածությամբ գերազանցում էր թուրքականին: Նախորդ ռուս-թուրքական պատերազմներում ռուսական զորքերը հաջողության էին հասել նույնիսկ ավելի փոքրաքանակ զորքերով, և այժմ, բնականաբար, պարզ էր, որ կարճ ժամանակում թուրքերը պարտվելու էին: Գլխավոր ռազմաճակատը Բալկանյանն էր: Այստեղ ռուսական բանակը ղեկավարում էր ցարի եղբայրը՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը: Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակը ղեկավարում էր ցարի մյուս եղբայրը՝ Կովկասի կառավարչապետ, մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովը:

Բոլոր ռազմաճակատներում ռուսները ջախջախեցին թուրքական բանակներին, գրավեցին Արևմտյան Հայաստանի զգալի մասը, Բուլղարիան և մոտեցան մայրաքաղաք Կ. Պոլսին: Այսպիսով՝ Օսմանյան կայսրությունը կանգնեց կործանման իրական վտանգի առջև, և այն փրկելու միակ հնարավորությունը զինադադար խնդրելն էր:

Պատերազմն արևմտահայության մեջ հույսեր արթնացրեց, որ կարող են վերջնականապես ազատվել թուրքերի ու քրդերի դարավոր վայրագ տիրապետությունից: Ինչպես բոլոր ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, այս անգամ ևս, արևմտահայերի բացահայտ համակրանքը ռուսների կողմն էր: Դա պայմանավորված էր նրանով, որ թուրքերն ու քրդերն անտանելի և դժոխային պայմաններ էին ստեղծել նրանց համար: Հուսահատության եզրին հասած արևմտահայությունը, բնականաբար, ուրախությամբ էր ընդունում ռուս զինվորներին՝ ի դեմս նրանց տեսնելով ազատարարների:

Պատերազմի նախօրյակին և սկսվելուց անմիջապես հետո սուլթանական կառավարության հարկադրանքով Թուրքիայի քրիստոնյա պետական ու կրոնական ձանաչված գործիչներն իրար հետևից գնում էին բրիտանական նորանշանակ դեսպան Հենրի Լեյարդի մոտ և իրենց դրական վերաբերմունքն էին հայտնում թուրքական վարչակազմի նկատմամբ:

<sup>16</sup> «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», Գիրք Ժ, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, Կազմող՝ Ս. Ա. Բէիբուրեան, Ե., 2002, էջ 198-199:

1877 թ. ապրիլի 3-ին Հ. Լեյարդի հետ հանդիպում ունեցան օսմանյան խորհրդարանի 6 հայ պատգամավորներ<sup>17</sup>: Նրանցից Սեպուհ Մագսուտյանը հավաստիացրեց, որ Թուրքիայում կրոնական համայնքներն ավելի մեծ առանձնաշնորհումներ ունեն, քան Ռուսաստանում, հետևաբար իրենք զարգացման ավելի մեծ հնարավորություններ ունեն Թուրքիայում: Միաժամանակ Ս. Մագսուտյանը խստորեն դատապարտեց Թուրքիայում տիրող հոռի և ապականված կարգերը, կյանքի ու գույքի ապահովության բացակայությունը<sup>18</sup>:

Ապրիլի 14-ին հայ առաքելական և կաթոլիկ, ասորիների, հույների պատրիարքները ներկայացուցիչներ ուղարկեցին դեսպան Հ. Լեյարդի մոտ և հայտնեցին, որ իբր գոհ են Թուրքիայից, չեն ուզում ռուսական տիրապետության տակ անցնել, որը քրիստոնյաներին իբր կարող է ուղղափառ դարձնել, և իրենց միակ խնդրանքը որոշ բարելավումներ մտցնելն է: Ներսես Վարժապետյանը դեսպանին նույնիսկ հայտնեց, որ հայերը պատրաստ են միլիցիայի գնդեր կազմել և կռվել ընդհանուր հայրենիքի համար<sup>19</sup>:

Պատերազմի առաջին օրերին հայ պատգամավորներն օսմանյան խորհրդարանում «հայրենասիրական» ճառեր էին ասում՝ նշելով, որ հայերը պատրաստ են զենքով պաշտպանել ընդհանուր հայրենիքը: Սակայն պատկերը փոխվեց, երբ լուրեր ստացվեցին, որ անկանոն զորքը և քրդերն ավերում են հայկական բնակավայրերը, կոտորում են բնակչությանը: Հայ և հույն պատգամավորները քննադատեցին կառավարությանը՝ մեղադրելով քրդերին օժանդակելու համար: Հիշեցնում էին, որ նման գործողությունները պատճառ դարձան Բուլղարիայում և Ռումելիում ապստամբության համար: «Մի՞թե արդարությւնն է, որ Հայրը՝ տէրութեան ամենէն անելի հնազանդ ազգը՝ այսպէս չարչարուի և կեղեքուի, նույնիսկ մեր տէրութեան դէմ ապստամբող Քիւրտերու ձեռքով»<sup>20</sup>: Հունիսի 14-ին հույն պատգամավորներ Վասիլակի բեյ Սարակիոտիսը և Նիկոլակի Սուլլիդիսը խստորեն դատապարտեցին քրդերի իրականացրած հայերի կոտորածը և կառավարության անտարբերությունը: Իսկ Կ. Պոլսի հայկական և հունական մամուլը միաժամանակ բարձրացրին խնդիրը՝ այն համարելով բոլոր քրիստոնյաների դեմ ուղղված քայլ<sup>21</sup>: Մահմեդական պատգամավորներից շատերը նույնպես համակարծիք եղան բարձրացված խնդրի հետ և կառավարությունից պահանջեցին դադարեցնել բռնությունները հայերի դեմ և պատժել մեղավորներին, քանի որ նման դեպքերի պատճառով էր դեսպանաժողով գումարվել, ապա պատերազմ սկսվել: Սակայն Աբդուլ Համիդը հունիսի 19-ին երկրում ռազմական դրություն հայտարարեց, իսկ խորհրդարանը 3 ամսով արձակուրդ ուղարկեց:

1877 թ. օգոստոսի 10-ին սուլթանը Ներսես պատրիարքին հրավիրեց իր մոտ և բավական սիրալիր գրույցից հետո նրան պարզևատրեց «Օսմանիե» շքանշանով<sup>22</sup>: Դրա նպատակն էր փարատել այն վատ տրամադրությունները, որ առաջ էին եկել Բայազետում, Ալաշկերտում և այլ վայրերում կազմակերպված հայկական կոտորածների հետևանքով ու հայերին հեռու պահել ապստամբությունից:

Արևելահայերը բավական ծանրակշիռ մասնակցություն ունեցան դեպի Արևմտյան Հայաստան ռուսական բանակի հաղթական առաջխաղացման ընթացքում: Կովկասյան ճակատի ռուսական բանակը ղեկավարում էին մի շարք հայ գեներալներ՝ Միքայել և Իվան Լորիս-Մելիքովները, Արշակ Տեր-Ղուկասովը, Հովհաննես Լազարևը, Բեհբուժ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Ստեփան Քիշմիշևը: Կային նաև մոտ 500 հայ սպաներ: Այդ փաստը ավելի էր ոգևորում հայերին, որի շնորհիվ ռուսական բանա-

<sup>17</sup> Օսմանյան խորհրդարանի 86 պատգամավորներից 38-ը քրիստոնյա էին, այդ թվում՝ 12 հայեր. Կ. Պոլսից՝ Հովհաննես Ալաիվերդին (խորհրդարանի փոխնախագահ), Սեպուհ Մագսուտյանը, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Կարինից՝ Դանիել Խարաճյանը, Համազասպ Պալարյանը, Դիարբեքիրից՝ Հովսեփ Գազազյանը, Սեբաստիայից՝ Հակոբ Շիրինյանը, Ադանայից՝ Պատիկյանը, Հալեպից՝ Մանուկ Խարաճյանը, Ադրիանապոլսից՝ Ռուբեն Կյումուշկերտանյանը, Զմյուռնիայից՝ Հակոբ Սպարթայանը, Բրուսայից՝ Սահակ Յավրույանը: Օսմանյան Սենատի անդամ էին նշանակվել Սերվիչենը և Միհրան Տյուզյանը:

<sup>18</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 188:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 185-186:

<sup>20</sup> Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը (Վաերագրեր), Գահիրե, 1946, էջ 58-59:

<sup>21</sup> Խասիոտիս Ի., նշվ. աշխ., էջ 10:

<sup>22</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 204-205:

կին միացան մոտ 42.000 հայ կամավորներ<sup>23</sup>: Արևմտահայերը չափազանց ոգևորված էին՝ տեսնելով, որ արևելահայերը ընդամենը մի քանի տասնամյակ առաջ հայտնվելով Ռուսաստանի տիրապետության տակ, բարձր դիրքերի են հասել այդ երկրի պետա-քաղաքական և զինվորական կառույցների տարբեր օղակներում: Հայ բնակչությունը, բացի կամավորներից, ռուսական բանակին տրամադրեց պարեն, բուժօգնություն, բարոյական մեծ աջակցություն:

Պատերազմի ժամանակ հայերի ակտիվ մասնակցությունը անտես չմնաց և այդ կապակցությամբ բազմաթիվ գովաբանող հոդվածներ տպագրվեցին ռուսական մամուլում: «Հայերը ռուսաց բոլոր պատերազմներում տաճկաց դեմ,- գրում է «Գոլոս» թերթը,- կազմում էին կամավոր զինվորություն, և հայ գեներալները, զորավարելով ռուսաց զորքերին, տաճիկներին հարվածներ էին տալիս, իսկ Տաճկաստանի հայերը չէին ծածկում իրենց համակրությունը դեպի Ռուսաստանը և իրենցից կախված ամեն միջոցներով նպաստում էին նորա հաջողությանը»<sup>24</sup>:

Պետք է նշել, որ այս պատերազմում արևմտահայերը որոշակի զգուշավորություն հանդես բերեցին և ռուսների կողմից բացահայտորեն չմասնակցեցին մարտական գործողություններին, չնայած ռուսական բանակի կազմում գտնվող հայ գեներալների ու հարյուրավոր սպաների ներկայությունը բավական ոգևորիչ էր<sup>25</sup>: Ղա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նախորդ երեք ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերը ամեն կերպ աջակցել էին ռուսներին, սակայն պատերազմից հետո հայկական տարածքները կրկին վերադարձվել էին թուրքերին, որոնք հայերին դարձրել էին քաղաքական նոխազ: Ռուսական իշխանությունները խուսափեցին արևմտահայերին երաշխիքներ տալուց, որ պատերազմից հետո կստանան ինքնավարություն կամ կանցնեն ռուսական տիրապետության տակ: Եվ չնայած այդ զգուշավոր վերաբերմունքին՝ արևմտահայերը չխուսափեցին կոտորածներից, թալանից, հալածանքներից:

Պատերազմում ծանր պարտություններ կրելուց հետո անելանելի վիճակում հայտնված սուլթանական կառավարությունը փորձեց ռուսական բանակներին կանգնեցնելու նպատակով օգտագործել նաև հպատակ քրիստոնյա ժողովուրդների ուժերը:

Հայերը նախկինում բանակ չէին զորակոչվում և վճարում էին զինվորական հարկ (բեդելը ասկերիյե): Մինչև 1875 թ. հարկը գանձվում էր 20-40 տարեկան առողջ տղամարդկանցից: 1876 թ. հունիսի 10-ի օրենքով զինվորական հարկ էին վճարելու 15-75 տարեկան քրիստոնյաները: Հարկից ազատվում էին անաշխատունակները, հիվանդները և հոգևորականները: Հարկի չափը տարեկան մոտ 28 դուրուշ էր<sup>26</sup>: 1876 թ. օսմանյան սահմանադրության համաձայն՝ հայերն ու հույները նույնպես զորակոչվելու էին բանակ: Սակայն թուրքական իշխանությունների հետ համաձայնություն էր կայացվել, որ այդ ժողովուրդներին դեռևս բանակ չզորակոչեին, քանի որ նրանք զենքին սովոր չէին և անմիջապես պատերազմ ուղարկելը ճիշտ չէր լինի: Մեծ վեզիրը դեռ պատերազմի սկզբին պատրիարքին առաջարկեց կազմել 2 վաշտ, սակայն ոչ մի հայ չցանկացավ կամավորագրվել<sup>27</sup>:

1877 թ. նոյեմբերի 15-ին սուլթանը հրովարտակ հրապարակեց, որով ներքին զորքերում ծառայելու էին զորակոչվելու 17-45 տարեկան քրիստոնյաները: Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը նոյեմբերի 25-ին քննարկեց զինվորագրվելու պահանջը: Բուռն վիճաբանություններից հետո որոշվեց խնդրի քննարկումը թողնել պատրիարքի և եկեղեցական ժողովի իրավասությանը<sup>28</sup>:

Ազգային ժողովը փաստորեն քննարկեց հարցը, սակայն դրական չարտահայտվեց: Նման պայմաններում պատրիարքը հրաժարական ներկայացրեց, բայց

<sup>23</sup> Ներսիսյան Ա., Հայերի մասնակցությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Ե., 1958, էջ 93:

<sup>24</sup> Բաղայան Խ., Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում (1877-1878 թթ.), Ե., 1959, էջ 67:

<sup>25</sup> Խասիոտիս Ի., նշվ. աշխ., էջ 11:

<sup>26</sup> Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Ե., 2002, էջ 173-175:

<sup>27</sup> «Ատենագրությունք Ազգային ժողովոյ», 1876-1877, էջ 150-151:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 309-322:

Ազգային ժողովը և թուրքական կառավարությունը չընդունեցին<sup>29</sup>: Սուլթանի զինվորագրության պահանջի մերժումը, ի վերջո, որոշվեց քողարկել կրոնական վարագույրով: Այդ նպատակով հրավիրվեց եկեղեցական համագումար-ժողով, որը գտավ, որ հայերի զինվորագրությունն անժամանակ քայլ է՝ դա մեկնաբանելով 7 կետերով.

1. արդեն 5 դար է, որ հայերը զենք չեն վերցրել և այժմ հանկարծակիի են եկել,

2. հայերը վճարել են 1877-1878 թթ. զինվորական տուրքը և երկու տարով ազատ են զորակոչից,

3. հայերը պատերազմի ժամանակ զանազան նյութական զոհողություններով օգնել են օսմանյան բանակին,

4. պատերազմի ժամանակ հազարավոր հայեր են սպանվել, եկեղեցիներ ու գյուղեր են ավերվել և պետք չէ նոր զոհողություններ պահանջել,

5. պատերազմին կրոնական բնույթ է տրվել՝ ջիհադ է հայտարարվել, իսկ հայ եկեղեցին նզովում է այլ կրոնի համար կռվող հավատացյալներին,

6. կառավարությունը զինվոր է պահանջում բոլոր հպատակներից՝ հանուն հավասարության, բայց հավասարությունը միայն տեսականորեն գոյություն ունի, շարիաթը դեռ տիրապետում է,

7. մահմեդական օրենքը հողի սեփականության լիակատար իրավունք չի տալիս հային, հետևաբար հայը հայրենիք չունի և պարտավորություն չունի այն զենքով պաշտպանելու<sup>30</sup>:

Պետք է նշել, որ դա բավական համարձակ քայլ էր, բայց միևնույն ժամանակ չափազանց գրգռիչ ու ոչ քաղաքագիտական կեցվածք էր հատկապես ռուսներին նվիրվածության հետնապատկերի վրա: Այդ մերժումը վայնասունով ընդունեցին ոչ միայն թուրքական, այլև Կ. Պոլսի անգլիական ու ֆրանսիական թերթերը: Հ. Լեյարդը հետագայում մեղադրեց քրիստոնյաներին, որ զինվոր չէին տրամադրել և թուրքիայի պարտության պատճառն էին դարձել<sup>31</sup>:

Պատերազմում թուրքերի պարտությունը բացահայտ էր, և սուլթան Աբդուլ Համիդ II-ը ստիպված էր հաշտություն խնդրել: 1878 թ. հունվարի 19-ին Ադրիանուպոլսում ստորագրվեց զինադադարի համաձայնագիր: Սակայն այդ համաձայնագրում հայերի ու Հայաստանի մասին խոսք չկար, և այդ հանգամանքը մտահոգեց հայ գործիչներին: «Գրեթե յուսահատելու էր, - 1878 թ. հուլիսի 21-ին Ազգային ժողովին ներկայացված զեկուցագրում նշում էր պատրիարքը, - և ես չ'գիտեմ թե ի՞նչպես չ'յուսահատեցանք: Անկարելի է նկարագրել Ազգին մորմոքը...»<sup>32</sup>:

Պատերազմում ռուսական բանակի հաղթանակից և թուրքիայի պարտությունից հետո արևմտահայության առջև բացվեց ինքնավարություն ձեռք բերելու հեռանկար: Այս շրջանում մի շարք ռուսական թերթեր նույնպես պահանջում էին հայերին ինքնավարություն տալ<sup>33</sup>: Ռուս լրագրողներից մեկը նշում էր. «Մի՞թե հայերը պիտի չստանան քաղաքական իրաւունքներ, լոկ այն պատճառով, որովհետև նրանք տանջուել են, չարչարուել են, բայց համբերել են և չեն ապստամբուել»<sup>34</sup>: Առանձին ռուս գործիչներ նույնիսկ հանդես էին գալիս Հայաստանին անկախություն տալու կոչերով: «Պռավոսլավնոյե օբզորենիե» հանդեսում ռուս հոգևոր գործիչ և լուսավորիչ Թեոֆան Եպիսկոպոս Ջատվորնիկը պահանջում էր վերականգնել հայկական թագավորությունը<sup>35</sup>:

Այդ ամենը նոր լիցք և հույսեր էր տալիս հայությանը: Թվում էր՝ եկել է դարեր շարունակ սպասված այն պահը, երբ արևմտահայությունը վերջապես ազատ շունչ կքաշեր՝ թոթափելով թուրք պաշտոնյաների, քուրդ բեկերի ու չերքեզների հարստահարումները: Պետք է նշել, որ այդ շրջանում անկախության մասին որևէ խոսք չկար, և հայերի միակ ձգտումը ինքնավարություն ձեռք բերելն ու քաղաքացու համար տարրական

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 326-327:

<sup>30</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 225-226:

<sup>31</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 117:

<sup>32</sup> «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1878-1880, էջ 62:

<sup>33</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 335-337:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 336:

<sup>35</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 108:

իրավունքներ ապահովելն էր: Իհարկե, հայ գործիչներից շատերը հստակորեն գիտակցում էին, որ ինքնավարությունը դեպի անկախություն տանող ճանապարհն էր:

Ղեռս 1877 թ. հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի պատգամավորների մեծ մասը Ղալաթիայի Կենտրոնական վարժարանում գաղտնի խորհրդակցություն գումարեց և որոշեց Հայկական հարցը ներկայացնել Ռուսաստանի դատին: Նրանք Ներսես վարդապետ Բարդուղյանի միջոցով Պետրոս Դ կաթողիկոսին ուղարկեցին արևմտահայության ձգտումներն արտահայտող առաջարկներ՝ խնդրելով դրանք ներկայացնել ռուսական իշխանություններին: Այն նախատեսում էր երեք հնարավոր տարբերակ.

1. Մինչև Եփրատն ընկած տարածքը, որը նախկին Մեծ Հայքն է, Թուրքիային չվերադարձնել և թողնել Ռուսաստանին: Փակագծերում նշում էին, որ այս առաջարկն այնքան էլ ցանկալի չէ, սակայն եթե Ռուսաստանը գրավի Հայաստանը, ոչինչ անել չեն կարող և խնդրում էին, որ հնարավորության դեպքում քաղաքների ու գյուղերի ազգային ներքին վարչական ձևը չփոխեն:

2. Եթե Հայաստանը չէր անցնելու Ռուսաստանին, ապա խնդրում էին տալ այն շնորհներն ու արտոնությունները, ինչ Բուլղարիային ու բուլղարներին՝ ռուսական կայսրի պաշտպանությամբ ու հովանավորությամբ:

3. Եթե Հայաստանը վերադարձվելու էր Թուրքիային, խնդրում էին երաշխիքներ պահանջել երկրի բարեկարգման ու հպատակների հավասարության համար, և այդ երաշխիքները լինեն Հայաստանում ռուսական զորքերի ներկայության պայմաններում կատարվող բարենորոգումները, որի տակ հասկանում էին.

ա/ ոստիկանության մեծ մասը հայերից կազմվի,

բ/ հայերը ևս կանոնավոր զինվորական կրթություն ստանան,

գ/ քրդերն ու չերքեզները կա՛մ Հայաստանից հեռացվեն, կա՛մ լեռներից իջնելով՝ քաղաքներում ու գյուղերում նստակյացության անցնեն, իսկ նրանց ոստիկանության մեջ չընդգրկեն,

դ/ հայերին տրվեն պաշտոններ, հատկապես կուսակալներն ու գավառապետերը լինեն հայեր,

ե/ միայն այդ ամենից հետո ռուսական զորքերը հեռանան Հայաստանից:

Խնդրում էին, որ կաթողիկոսը պատգամավորություն ուղարկի մեծ տերությունների մոտ՝ Հայկական հարցը դեսպանաժողովում բարձրացնելու համար: Առաջարկում էին մյուս տերություններին ներկայացնել իրենց առաջարկների միայն երկրորդ և երրորդ կետերը, իսկ միայն ռուսական պաշտպանության ու երաշխիքների փոխարեն պահանջել եվրոպականը<sup>36</sup>:

Սակայն կաթողիկոսը, որը բավական երկար ժամանակ լարված հարաբերությունների մեջ էր պատրիարքարանի հետ, այդ ծրագրին ընթացք չտվեց և որևէ քայլ չկատարեց Հայկական հարցին աջակցելու համար:

Միևնույն ժամանակ Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը մեծ վեճի-րին ներկայացրեց մի գրություն, որով առաջարկում էր հայերի համար ապահովել. «1. աշխատանքի ազատություն և ապահովություն, 2. անձնական ապահովություն, 3. սեփականության ապահովություն, 4. ուսումնարանների, եկեղեցու և ազգային սեփականության ապահովություն, 5. վերջապես, Հայաստանի վարչական կառավարման բարելավում՝ ժամանակի պահանջներին և հանգամանքներին համապատասխան»<sup>37</sup>:

Պատրիարքը հույս ուներ, որ եվրոպական երկրների աջակցությամբ հնարավոր է Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերել: Այդ նպատակով նա դիմեց Հ. Լեյբարդին՝ սպառնալով, որ եթե եվրոպական տերությունները և հատկապես Մեծ Բրիտանիան չօգնեն հայկական պահանջների բավարարմանը, ապա իրենք կդիմեն Ռուսաստանի աջակցությանը<sup>38</sup>:

<sup>36</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 260-262:

<sup>37</sup> Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ), Ե., 1978, էջ 120-121:

<sup>38</sup> Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878թ. վեհաժողովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1996, թիվ 3, էջ 5:



Պատրիարքը միաժամանակ սկսեց շոշափել ռուս գործիչների կարծիքները Հայկական հարցում: Ռուսական բանակի կողմից Ադրիանուպոլիսի գրավումից հետո Ներսես պատրիարքի հանձնարարությամբ տեղի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսճուզյանը Ֆիլիպոպոլիսի նախկին ռուսական հյուպատոս Նայդեն Գերովի միջնորդությամբ գաղտնի հանդիպում ունեցավ Թուրքիայում ռուսական դեսպան, սլավոնաֆիլական շարժման ակնառու ներկայացուցիչ կոմս Նիկոլայ Իգնատևի հետ: Կոմսը հետևյալ կերպ ներկայացրեց իրավիճակը. «Այո, Ռուսիոյ բանակը մինչև Կարին յառաջացած է և գրաւած է: Հայաստանի այդ մասն այժմ ազատութիւն կը վայելէ, բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլլարք, *վասնզի հայք անպատրաստ գտնուեցան եւ Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարրք*: Ես երեք տարիէ ի վեր Հայոց Դատին պաշտպանն եւ փաստաբանն եղած էի. թողունք գավառցի հայոց աղքատութիւնն եւ անտարբերութիւնը, մանաւանդ ցիրուցան պանդխտութեան դատապարտեալ վիճակը, մինչեւ իսկ *Կ. Պօլսոյ հայոց ողջախոհ եւ գործօն մասն՝ սկսեալ Նուպար փաշայէ, արգելք եղած են իմ բարենպաստակ գործոցս*: Բայց մի վիատիք, կը յուսադրեմ զձեզ: Քանի որ Թիւրքիոյ հպատակ էք, ապագային յուսով, այս վայրկեանէս սկսեցէք պատրաստ լինիլ, պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ, եւ քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս եւ բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրաստ եղէք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, եւ ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ: Պատրիարքնիդ թող ժամավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է»<sup>39</sup>:

Այս հանդիպման մասին Գ. Ռուսճուզյանը հունվարի 20-ին հաղորդեց պատրիարքին: Արագորեն գործելու Ն. Իգնատևի կոչը ոգևորություն առաջացրեց պոլսահայերի մոտ: Սակայն հայ գործիչներն անուշադրության մատնեցին նրա մեղադրանքներն ու Հայկական հարցի լուծման անժամանակ լինելու մասին ակնարկները: Իրականում Ն. Իգնատևը պարզորոշ հասկացնում էր, որ հայերը պետք է նախապատրաստվեին, որպեսզի հաջորդ հարմար առիթի դեպքում իրենց խնդիրներն առաջ քաշեին, իսկ ներկա պահը հայերի համար դեռ վաղ էր համարում:

Ինչպես տեսնում ենք, ռուս քաղաքական գործիչներն այնքան էլ հակված չէին հայերին ինքնավարություն տալու գաղափարին: Ն. Իգնատևը հայությանը համարում էր «մեռած տարր, անտարբեր կամ հակառուս», չնայած պատերազմի ժամանակ ռուսական բանակին էին միացել ավելի քան 40.000 հայ կամավորներ, իսկ պոլսահայերը մերժել էին կամավորներ տրամադրել թուրքական բանակին: Իսկ բրիտանացի Ջ. Կրիզը վկայում է, որ պատրիարքն ասել է. «Երկու հարյուր տարի մենք նայում ենք Ռուսաստանի կողմը և նրանից ենք սպասում փրկություն: Ես փրկություն չեմ տեսնում որևէ այլ բանում, բացի դաշինքից Ռուսաստանի հետ»<sup>40</sup>:

1878 թ. փետրվարին գերիների փոխանակությամբ զբաղվելու պատրվակով Ադրիանուպոլիս ժամանեցին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի առաջին և երկրորդ ատենապետեր Ստեփան փաշա Ասլանյանը, որը Թուրքիայի գլխավոր զինվորական բժիշկն էր, և պետական խորհրդի անդամ Հովհաննես Նուրյանը: Որպես Կարմիր մահիկի ներկայացուցիչ վերջինս հոգալու էր հիվանդների փոխադրությունը: Նրանք պատրիարքի հանձնարարությամբ գաղտնի հանդիպում ունեցան Ն. Իգնատևի հետ և ներկայացրին հունվարի 31-ին պատրիարքի գրած նամակը, որով Ռուսաստանի աջակցությունն էր խնդրում հայերին ինքնավարություն տալու համար: Հայ պատվիրակները ցանկություն էին հայտնում ստանալ Լիբանանի կարգավիճակին նմանվող ինքնավարություն: Մի քանի օրից Ն. Իգնատևը նրանց վստահեցրեց, որ կայսր Ալեքսանդր II-ի հավանությամբ հայերի խնդիրը ևս ներկայացվելու էր պայմանագրում<sup>41</sup>: Սակայն ինչպես հետագայում պարզվեց, ռուսական ծրագրերն ու հայության ձգտումները բավական հեռու էին իրարից:

<sup>39</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 270-271:

<sup>40</sup> Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Ե., 1989, էջ 178:

<sup>41</sup> Գաբրիելյան Խ., նշվ. աշխ., էջ 172:

Իր զեկուցագրում Ն. Իզնատևը նշում է, որ ինքնավարության ձգտումներով ու խնդրանքներով հայերը բավական ծանր վիճակի մեջ էին դրել իրեն: Նրան զարմացրել էր, որ պատրիարքը բացահայտորեն շնորհավորական ուղերձ էր հղել ռուսական բանակի հրամանատարին, իսկ թուրքական պետության բարձրաստիճան հայ պաշտոնյաներ Ս. Ասլանյանը և Հ. Նուրյանը այցելել էին իրեն: Նրանք ներկայացրել էին հայերի ծանր վիճակը և Հայաստանի համար ինքնավարություն էին խնդրել Սեբաստիայի, Վանի, Մուշի և Էրզրումի նահանգների տարածքում, որոնք առաջարկում էին որոշ ժամանակով զբաղեցնել ռուսական բանակի կողմից<sup>42</sup>:

Սակայն Ն. Իզնատևն այդ գործիչներին մեղադրեց, թե նրանք միշտ հակառուսական քաղաքականություն են վարել, և հարցրեց, թե ինչո՞ւ են այժմ Ռուսաստանի հովանավորությունը խնդրում: Հայ գործիչները պատասխանեցին, որ նախկինում իրենք փորձում էին հավատարիմ մնալ թուրքական պետությանը՝ հուսալով, որ եվրոպական պետությունների առաջարկած բարենորոգումները կիրականացվեն, և հայ բնակչության վիճակը կբարելավվի, սակայն այժմ Թուրքիան՝ որպես հզոր տերություն, դադարում է գոյություն ունենալուց, և իրենք անհրաժեշտ են համարում Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերել Ռուսաստանի հովանավորությամբ<sup>43</sup>:

1878 թ. փետրվարի 1-ին Կ. Պոլսի պատրիարքարանը 9 եպիսկոպոսների ստորագրությամբ խնդրագրեր ուղարկեց Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ին և վարչապետ Ա. Գորչակովին: Նրանք շնորհավորում էին ռուսական զենքի փայլուն հաղթանակը և խնդրում էին հովանավորել հայ ժողովրդին՝ ստանալու այնպիսի ինքնավարություն, ինչպիսին ձեռք էին բերում եվրոպական քրիստոնյաները<sup>44</sup>:

Փետրվարի 7-ին Ադրիանուպոլսի հայկական եկեղեցում մեծ արարողություն կազմակերպվեց, որին ներկա էին նաև մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը, կոմս Ն. Իզնատևը, թուրքական պատվիրակության քարտուղար Սարգիս բեյ Համամջանը, Ս. Ասլանյանը, Հ. Նուրյանը<sup>45</sup>:

Մինչ Սան Ստեֆանոյի բանակցությունները թուրք պատվիրակները հանդիպեցին ռուսական Բալկանյան բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ և խնդրեցին չքննարկել Հայկական հարցը: Սակայն իշխանը պատասխանեց, որ կայսրից հատուկ հրահանգ է ստացվել, և ինքը ոչինչ չի կարող անել<sup>46</sup>:

Նիկոլայ Ռոմանովն ընդունեց նաև պատրիարք Ներսես Վարժապետյանին, որը Սան Ստեֆանո էր մեկնել սուլթանի գիտությամբ: Պատրիարքը խնդրեց օժանդակել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու ծրագրին, բայց իշխանը չպաշտպանեց նաև այդ գաղափարը<sup>47</sup>:

Այսպիսով՝ ռուսական կողմը մերժեց և՛ թուրքերի, և՛ հայերի խնդրանքներն Արևմտյան Հայաստանի հարցում: Ռուսաստանն ուներ սեփական շահերը և, բնականաբար, չէր պատրաստվում բավարարում տալ այլ ժողովուրդների պահանջներին ու ազգային ձգտումներին:

Շուտով Ն. Իզնատևը Ռուսաստանի վարչապետ և արտգործնախարար Ա. Գորչակովից հեռագիր ստացավ, ուր պարզաբանվում էր կառավարության դիրքորոշումը Հայաստանի հարցում: Նշվում էր, որ Կովկասյան բանակի հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովն առաջարկել է Կովկասում սահմանափակ տարածքներ միացնել Ռուսաստանին, որը հավանություն է գտել նաև կայսրի կողմից, հետևաբար Հայոց պատրիարքի բարձրագրած ինքնավարության հարցը կապված չէ իրենց ծրագրերի հետ և պետք է մերժել<sup>48</sup>:

<sup>42</sup> «Сан-Стефано». Записки гр. Н.П.Игнатъева с примечаниями А. А. Башмакова и К. А. Губастова, «Исторический Вестник», Апрель, 1915, т. 140, ст. 52.

<sup>43</sup> Там же, ст. 53.

<sup>44</sup> «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», էջ 206-207:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 210:

<sup>46</sup> Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը ..., էջ 7:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>48</sup> «Сан-Стефано». Записки гр. Н.П.Игнатъева, «Исторический Вестник», Июнь, 1915, т. 140, ст. 794.

Կովկասյան սահմանների հարցում որոշվեց Ռուսաստանին միացնել Բաթումը, Կարսը, Բայազետը: Այդ տարածքների միացումը հնարավորություն էր տալիս բարելավել սահմանների պաշտպանությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում երգրումի ուղղությամբ հարձակողական գործողություններ սկսել<sup>49</sup>:

Ռուսական կառավարությունը դեմ էր Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, քանի որ այն հետագայում կարող էր արգելք հանդիսանալ ռուսների կողմից այդ տարածքների նվաճման ծրագրի իրականացմանը, միաժամանակ կարող էր վարակիչ ազդեցություն ունենալ արևելահայերի վրա, որոնք նույնպես կծգտեին որոշակի ինքնավարության:

Հարկ է նշել, որ պատրիարքը, Ս. Ասլանյանը և Հ. Նուրյանը ռուս գործիչների հետ բանակցությունների մեջ էին մտել սուլթանի գիտությամբ: Թուրքերը վախենում էին, որ ռուսական բանակի գրաված բոլոր տարածքները կմիացվեին Ռուսաստանին, այդ պատճառով էլ հայ գործիչներին ոչ միայն թույլատրել, այլև խորհուրդ էին տվել ինքնավարություն պահանջել Թուրքիայի սահմաններում: Դա թուրքական կողմի դիվանագիտական խաղն էր, որն ի վերջո պսակվեց հաջողությամբ: Իհարկե, արևմտահայերը հասկանում էին թուրքերի նպատակը և փորձում էին օգտվել հարմար առիթից:

1878 թ. փետրվարի 13-ին Ազգային ժողովի Ձեռնհասության դիվանի ատենապետ Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլյանը Կ. Պոլսից Վահրամ Եպիսկոպոս Մանկունուն ուղարկած նամակում նկարագրում է պոլսահայերի մոտ տիրող միասնությունը՝ առանց քաղաքական ու կրոնական վեճերի: Բոլորը ձգտում էին հասնել Հայկական հարցի լուծմանը: Միակ տարբերությունն այն էր, որ հայ կաթոլիկներն ու բողոքականները Ֆրանսիայի ու Անգլիայի միջնորդությամբ ցանկանում էին Կիլիկիայի ինքնավարության հարցը ևս բարձրացնել<sup>50</sup>: Դրան կողմ էր նաև Խորեն Նարբեյը, որը ձգտում էր եղբորը՝ Գվիդոն Լուսինյանին (նախկինում՝ հայր Ամբրոսիոս վարդապետ Գալֆայան), դարձնել Կիլիկիայի իշխան, քանի որ իրենք իբր սերում էին Լուսինյան արքայատոհմից<sup>51</sup>:

Սակայն ո՛չ թուրքական, ո՛չ ռուսական կողմը շահագրգռված չէր հայկական պահանջների բավարարման հարցում, և Սան Ստեֆանոյի պայմանագրում Հայաստանի ինքնավարության մասին նույնիսկ խոսք չկար:

Հաշտության պայմանների շուրջ ռուս-թուրքական բանակցությունները տեղի ունեցան Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող Սան Ստեֆանո ծովափնյա ավանում: Ռուսական կողմը ներկայացնում էին Ն. Իգնատևը և Ալեքսանդր Նելիդովը, իսկ թուրքական կողմը՝ արտգործնախարար Սաֆվետ փաշան, Բեռլինում դեսպան Սաադուլլահ բեյը, իսկ քարտուղարն էր Սարգիս բեյ Համամչյանը:

1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին Սան Ստեֆանոյում՝ Տատյանների ապարանքում, ստորագրվեց ռուս-թուրքական հաշտության նախնական պայմանագիր<sup>52</sup>:

Սան Ստեֆանոյի պայմանագրով անկախացան և տարածքներն ընդարձակեցին Ձեռնոգորիան, Սերբիան, Ռումինիան, ինքնավարություն ստացավ Բուլղարիան: Սակայն Արևմտյան Հայաստանի մեծագույն մասն այդ պայմանագրով կրկին դատապարտվում էր մնալու թուրքական տիրապետության տակ: Հասկանալով, որ հայ ժողովրդի վիճակն անտանելի է սեփական հայրենիքում, իսկ հայերի հույսերը կապված են Ռուսաստանի հետ, ռուս դիվանագետների պահանջով պայմանագրում հատուկ կետ մտցվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ:

Այդ հոդվածը պայմանագրի մեջ մտցնելու գործում մեծ ջանքեր գործադրեց նաև Ս. Համամչյանը<sup>53</sup>:

Պայմանագրի 16-րդ հոդվածը նախատեսում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային

<sup>49</sup> Там же, ст. 796-797.

<sup>50</sup> «Վաերագրեր Հայ եկեղեցու պատմութան», էջ 208-211:

<sup>51</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 273:

<sup>52</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 83-98:

<sup>53</sup> Սարուխան, նշվ. աշխ., էջ 272:

վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգություններ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»<sup>54</sup>:

Ինչպես տեսնում ենք, 16-րդ հոդվածով նախատեսվող անորոշ բարենորոգումները չափազանց հեռու էին հայերի սպասած ինքնավարությունից:

Պայմանագրի 19-րդ հոդվածով ռազմատուգանքի դիմաց Ռուսաստանին էին միացվելու հայկական որոշ տարածքներ՝ Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և Ալաշկերտի հովիտը<sup>55</sup>: Դրա շնորհիվ այդ տարածքների հայ բնակչությունը կփրկվեր ֆիզիկական ոչնչացման վտանգից և զարգացման բարենպաստ պայմաններ կունենար, ինչպես նախկինում Ռուսաստանին անցած հայկական մյուս տարածքներում:

Ն. Իզնատևն իր զեկուցագրում հետևյալ կերպ է պարզաբանում հայկական տարածքների միացման նշանակությունը: Նա նշում է, որ դրանք չափազանց հարուստ շրջաններ են և ռազմավարական կարևոր դիրք ունեն, քանի որ հեշտացնում են դեպի էրզրում հարձակումը, ինչպես նաև գրեթե անհնար են դարձնում հակառակորդի հարձակողական գործողությունները կովկասյան սահմանների երկայնքով: Նա կարևոր էր համարում, որ իրենց վերահսկողության տակ է անցնում Բայազետով Պարսկաստան գնացող տարանցիկ ճանապարհը, համոզված էր, որ նոր սահմանների շնորհիվ իրենք կարող էին ազատորեն իրենց ազդեցությունը տարածել քրդական քոչվոր ցեղերի, ինչպես նաև Վանի ու Մուշի հայ բնակչության վրա<sup>56</sup>:

25-րդ հոդվածի համաձայն՝ ռուսական զորքերը դուրս էին գալու Արևմտյան Հայաստանից վեց ամսվա ընթացքում<sup>57</sup>: Այս կետը պայմաններ էր ստեղծում հայկական տարածքները հետագայում որևէ պատճառաբանությամբ Ռուսաստանի տիրապետության տակ պահելու համար: Թուրքերը ստիպված կլինեին Արևմտյան Հայաստանում հնարավորինս արագ բարենորոգումներ իրականացնել, որպեսզի ռուսական բանակն այնտեղ իր ներկայությունը երկարաձգելու որևէ պատճառ չունենար:

17-րդ և 27-րդ հոդվածներով թուրքական կառավարությունը ներում էր շնորհում պատերազմի ժամանակ ռուսների հետ համագործակցած անձանց և պարտավորվում էր ցանկացողներին չարգելել մեկնելու ռուսական տարածքներ<sup>58</sup>:

Ռուսական պատվիրակության ղեկավար, գեներալ Ն. Իզնատևը մարտի 3-ին Ա. Գորչակովին ուղարկված զեկուցագրում նշում էր. «Հոդված 16. Այս հոդվածով լիակատար բավարարություն է տրվել հայերի ընդհանուր ձգտումներին: Առաջին անգամ Հայաստան անունը հիշատակվել է միջազգային պայմանագրում և այն պարտավորությունները, որ Բ. Դուռը ստանձնել է, հիմք կդառնան մեր հովանավորությունը Փոքր Ասիայի քրիստոնյաների մեծամասնության վրա տարածելու համար: Այդ հոդվածը Եվրոպային ցույց կտա, որ Ռուսաստանը բացառապես միայն սլավոնների, նույնիսկ իր դավանակիցների մասին չի հոգում, այլ առաջնորդվելով մարդասիրությամբ՝ նպատակ ունի ապահովել Թուրքիայի ամբողջ քրիստոնյա բնակչության բարեկեցությունը: Քանի որ թուրք լիազորները համառորեն ընդդիմացան պայմանագրի մեջ հիշատակել էջմիածնի կաթողիկոսի անունն իբրև համայն հայության կրոնապետի, ռուս լիազորները զգուշացան չպնդել այդ մասին: Իսկապես, միջազգային մեծ կշիռ տալով կաթողիկոսին, մեզ համար վարչական որոշ դժվարություններ կարող էինք ստեղծել Կովկասի մեջ՝ հայերի մոտ մեր շահերին անհարիր որոշ ձգտումներ հրահրելով»<sup>59</sup>:

Ամենայն հայոց կաթողիկոսին Թուրքիայի հայերի առաջնորդ ձանաչելու հարցը բարձրացրել էր Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը, և այդ խնդրի մասին

<sup>54</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 92:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 93-94:

<sup>56</sup> «Сан-Стефано». Записки гр. Н.П. Игнатева, «Исторический Вестник», Октябрь, 1915, т. 142, ст. 87-88.

<sup>57</sup> Там же, ст. 96.

<sup>58</sup> Там же, ст. 92, 97.

<sup>59</sup> «Сан-Стефано». Записки гр. Н.П. Игнатева, «Исторический Вестник», Октябрь, 1915, т. 142, ст. 85.

1878 թ. հունվարի վերջին նամակով Ն. Իգնատևին տեղեկացրել էր արտագործ-նախարարության ներկայացուցիչ Նիկոլայ Գիրսը<sup>60</sup>:

Այսպիսով՝ ռուս դիվանագետները Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը լիովին բավարար էին համարում հայերի համար, և նրանց կարծիքով հայ ժողովուրդը պետք է գոհ լիներ, որ «Առաջին անգամ Հայաստան անունը հիշատակվել է միջազգային պայմանագրում»:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը սառը ցնցուղ էր հայ գործիչների համար, սակայն չկարողացավ բավարար չափով սթափեցնել նրանց և հեռու պահել անիրատեսական ծրագրերից, որոնք հենվում էին այս կամ այն մեծ տերության բարի կամքի ու մարդասիրական զգացմունքների վրա: Աշխարհի հզորները ցանկություն ու ժամանակ չունեին զբաղվելու մի ժողովրդի փրկությամբ, որը դեռ պատրաստ չէր իր ազատության համար արյուն թափել:

Հետաքրքիր է «Մշակ» թերթի խմբագիր Գ. Արծրունու մոտեցումը այդ պայմանագրին: Նա 16-րդ հոդվածը որակեց որպես «նահանգային ինքնավարություն» ձեռք բերելու հնարավորություն: Դրա տակ նա հասկանում էր քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային և գյուղական վարչություններ, գույքի և անձի ապահովություն, քուրդ ու թուրք բեյերի հարկերից ազատում, դատարանների առաջ քրիստոնեաների և մահմեդականների հավասարություն, ամբողջ երկրից տրվող տարեկան հստակ որոշված հարկ: Ինչ վերաբերում է հայերի պաշտպանությանը քրդերի և չերքեզների հարձակումներից, ապա դա Գ. Արծրունին իրագործելի էր համարում միայն այն պարագայում, եթե ստեղծվեին հայկական ոստիկանական ուժեր<sup>61</sup>: Սակայն ճշմարտությունն այն էր, որ պայմանագրում որևէ հիշատակություն չկար այդ հարցերի մասին, իսկ վերոհիշյալը զուտ Գ. Արծրունու լավատեսական ընկալումն էր:

Իհարկե, վերոնշյալ տեսակետը միայն Գ. Արծրունունը չէր: 16-րդ հոդվածը գրեթե ամբողջությամբ համապատասխանում էր Ղալաթիայում գումարված գաղտնի ժողովի երրորդ տարբերակին, որն ուղարկվել էր կաթողիկոսին: Այդ նախագիծը վստահաբար քննարկվել էր նաև արևելահայ գործիչների կողմից: Այնտեղ ներկայացված էին նաև այն բարենորոգումները, որոնք կարող էին բավարարել հայերին: Ըստ դրա՝ անհրաժեշտ էր ոստիկանությունը կազմել մեծամասամբ հայերից, նրանց թույլ տալ զինվորական կրթություն ստանալ, քրդերին ու չերքեզներին հեռացնել Հայաստանից կամ պարտադրել նստակեցության անցնել, նրանց չընդգրկել ոստիկանության մեջ, կուսակալներ ու գավառապետեր նշանակել հայերին: Միայն այդ կետերի իրագործումից հետո պետք է ռուսական զորքերը հեռանային Հայաստանից:

Միաժամանակ «Մշակ»-ի խմբագիրն առաջարկում էր Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը տեղափոխել Հայաստան՝ էրզրում կամ Վան, և դարձնել Հայաստանի տեղական նահանգական ինքնավարության գլխավոր կենտրոնական վարչություն<sup>62</sup>:

Այդ առաջարկը չափազանց կարևոր էր, քանի որ Հայկական հարցի և ազգային շատ խնդիրների անլուծելի մնալը կապված էր այն երևույթի հետ, որ ազգային ղեկավար կառույցները, քաղաքական, տնտեսական, հոգևոր և մտավոր ամենանշանավոր գործիչները հաստատվել էին բուն Հայաստանից շատ հեռու՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում: Դա թույլ չէր տալիս ազգային վերնախավին ճիշտ հասկանալու իրավիճակը հայրենիքում, տեղում միջոցներ մշակել ժողովրդի պաշտպանության համար, միաժամանակ նրանք գտնվում էին օսմանյան պետության վերահսկողության ու ազդեցության տակ:

Շատ դեպքերում հայկական վերնախավը չէր պատկերացնում Հայաստանի ազատագրությունը Օսմանյան պետությունից, քանի որ այդ դեպքում կմնային այլ պետության կազմում: Գաղտնիք չէ, որ նրանցից շատերը չէին պատկերացնում իրենց կյանքը շքեղ Կ. Պոլսից հեռու, Հայաստանի ինչ-որ գավառական քաղաքում: Հետևաբար նրանք հիմնականում փնտրում էին այնպիսի տարբերակներ, որոնք թույլ կտային

<sup>60</sup> Там же, Март, 1915, т. 139, ст. 763.

<sup>61</sup> Արծրունի Գ., Հայաստանի ինքնավարութիւնը, «Մշակ», 1878, Մարտ 10 (22), թիւ 37:

<sup>62</sup> Նույն տեղում:

բարելավել արևմտահայության վիճակը, միևնույն ժամանակ իրենք կմնային ընդարձակ կայսրության քաղաքական ու տնտեսական կյանքին հաղորդակից:

Այսպիսով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը հնարավորություն էր տալիս քիչ թե շատ իրական բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում ռուսական զորքի ներկայության պայմաններում կամ Ռուսաստանին իրավունք էր տալիս որևէ պատրվակով այդ տարածքներից զորքերը դուրս չբերել և միացնել իր տիրույթներին: Փաստորեն, երկու դեպքում էլ այդ պայմանագիրը հնարավորություն կտար հայերին ազատվելու թուրք-քրդական բռնություններից, իսկ հետագայում հասնել ինքնավարության կամ ամենաքիչը՝ փրկվել կոտորածներից:

Այսպիսով՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում կրկին ազատագրվել էր Արևմտյան Հայաստանի զգալի մասը: Արևմտահայությունը հույսեր էր փայփայում, որ վերջնականապես կազատագրվի թուրքերի ու քրդերի բռնություններից, հնարավորություն կստանա բալկանյան ժողովուրդների նման ձեռք բերել ինքնավարություն կամ կանցնի ռուսական տիրապետության տակ, ուր նրան չէր սպառնում ֆիզիկական ոչնչացման վտանգը: Օգտվելով բարենպաստ իրադրությունից՝ հայ ազգային գործիչները տարբեր նախագծեր կազմեցին ու ներկայացրին մեծ տերություններին: Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական նախնական պայմանագրով հայկական որոշ գավառներ անցնելու էին Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանի զգալի մասում իրականացվելու էին բարենորոգումներ ռուսական զորքերի ներկայության և Ռուսաստանի վերահսկողության պայմաններում: Դա հայերին հնարավորություն կտար փրկվելու հետագա ջարդերից և ապագայում հասնելու ինքնավարության ու անկախության:

**Самвел Погосян, Проекты автономной Армении 1878 году,-**В результате русско-турецкой войны 1877-1878 гг. большая часть Западной Армении была вновь освобождена. Западные армяне надеялись, что они будут, наконец, освобождены от насилия турок и курдов, и будут иметь возможность получить такую автономию как балканские народы или перейти под российское господство, где им не угрожало бы риск физического уничтожения. Армянские национальные деятели, пользуясь благоприятной ситуацией, создали различные проекты и представили великим державам. По российско-турецкому предварительному договору Сан-Стефано некоторые армянские провинции переходили к России, а в значительной части Западной Армении турки должны были осуществлять реформы в присутствии российских войск и под контролем русских. Это позволило бы армянам избежать дальнейших массовых убийств и добиться автономии и независимости в будущем.

**Samvel Poghosyan, The projects of autonomy of Armenia in 1878,-**As a result of the 1877-1878 Russian-Turkish war, a great part of Western Armenia was again liberated. Western Armenians hoped that they could finally be liberated from the violence of Turks and Kurds and would have an opportunity to get autonomy as the Balkan nations or would pass under Russian domination, where they wouldn't face the risk of physical destruction. By Russian-Turkish preliminary treaty of San Stefano, some Armenian provinces were passing to Russia and reforms would be made in the great part of Western Armenia in presence of Russian troops and under the control of Russians. This would enable the Armenians to escape further massacres and achieve autonomy and independence in the future.